

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Աշուր Մակարյան -ից
(դիմոկի անուն, ազգանուն)

Երևան, 091.21-54-57
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)
oshot.voskan@gmail.com

(Կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ Ձես ինչ ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:
Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

- Անցնեցրի պաշտետ.
- Այսուհետեւ ստուգի աշխատանքը
- Տեսչութեան գործադրությունը ստուգի աշխատանքը.
- Յեշաքի բարերարությունը նախարարության համար
- Ստուգի նախարարությունը 33 ԳԵ գործադրությունը և
- Գլուխացնելու աշխատանքը բարերարությունը կազմակերպության գործադրությունը ստուգի աշխատանքը.

Դիմում՝

Ա. Անան

Աշուր Մակարյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

<03> Հայիսի 2016 թ.

ՀՀ գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչարյան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016
Մայիս N Մ/5254-16

Ամփոփ տեղեկանք

Աշուտ Երջանիկի Ոսկանյանի վերջին տարիներին ծավալած գործունեության վերաբերյալ

2010թ. օգոստոսից հանդիսանում եմ Հայաստանի Ազգային Ազրարային Համալսարանի «Ազրարային քաղաքականություն և խորհրդատվություն» ամբիոնի վարիչ: Ամբիոնը հանդիսանում է «Ազրարային քաղաքականություն և տարածաշրջանի զարգացում», «Ազրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն», «Ազրոպարենային համակարգի ապահովագրական գործ» մասնագիտությունների թողարկողը: Ի պաշտոնե, համակարգում եմ ուսուցման բոլոր մակարդակներում ուսանողների ուսումնադաստիրակշական աշխատանքները՝ դասավանդելով «Ազրարային քաղաքականություն», «Եվրամիության միասնական ազրարային քաղաքականություն», «Ազրոբիզնեսի կազմակերպում», «Գիտության մեթոդաբանություն» առարկաները: Իմ կողմից կազմվել և հրատարակության է ներկայացվել դիպլոմային, կուրսային, արտադրական պրակտիկաների անցկացման և ինքնուրույն աշխատանքների կազմման մեթոդական ցուցումներ:

Ղեկավարում եմ մի շարք գիտական ատենախոսություններ հետևյալ թեմաներով.

1. «ՀՀ ազրարային ոլորտի պետական կարգավորման քաղաքականությունը և կառուցակարգերի կատարելագործումը»:
2. «Պետական աջակցության գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման կառուցակարգերի ձևավորումը ՀՀ-ում»:
3. «Ներդրումային քաղաքականության իրականցման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գյուղատնտեսությունում»:

Հանդիսանում եմ ՀԱԱՀ «Ազրարային քաղաքականության և տնտեսագիտության» հետազոտական կենտրոնի տնօրեն, որտեղ իրականցվում է «ՀՀ ազրարային ոլորտի պետական կարգավորման գործիքների և կառուցակարգերի կատարելագործումը» ծրագիրը, հետևյալ ենթաթեմաների ուղղությամբ՝

1. ՀՀ ազրարային ոլորտի պետական կարգավորման կառուցակարգերի կատարելագործում,

2. ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի գնահատման և ապահովագրական համակարգի ներդրման կառուցակարգերի մշակում,
3. ՀՀ-ում գյուղատնտեսական կոռուպտացիայի զարգացման 2014-2024թթ. ծրագրի մշակում:

Ծրագրի շրջանակներում հիմնականում ուսումնասիրվել և մշակվել են.

- ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը և պետական աջակցության քաղաքականության հիմնական սկզբունքները, հատկապես շեշտադրում է արվել ՀՀ գյուղատնտեսության զարգացում ապահովող պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և կանոնակարգերի մշակման վրա :

- Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ազրարային ոլորտում ապահովագրության իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքները, օրենսդրության կատարելագործման միջոցառումները, ազրուապահովագրության համակարգի ներդրման կառույցների և ենթակառույցների համակարգված ձևավորման անհրաժեշտությունը:

- Հայաստանի Հանրապետության պայմաններում ռիսկերը մեղմելու, ինչպես նաև ոլորտի եկամտաբերությունը բարձրացնելու համար իրականացվելիք միջոցառումները և համապատասխան քայլերը:

- «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» օրենքի նախագծի դրույթների ընդհանրացում և այլ անհրաժեշտ իրավական և նորմատիվային փաստաթղթերի ցանկը:

- Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ազրարային ոլորտում ապահովագրության իրականացման գործընթացը և արվել են միասնականացման առաջարկություններ:

-Գյուղատնտեսությունում պետական աջակցության ապահովագրության համակարգի ներդրման առաջին փուլում «Մեկ ռիսկ մեկ մշակաբույս» պրոդուկտի, այնուհետև ինդեքս ապահովագրության իրականացման հիմնավորումը:

- Գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսության այլ սուբյեկտների գործունեությունը բնութագրող դեկլարացիաների լրացման, հավաստիության գնահատման և գրանցման կանոնակարգերին անցման հիմնավորումը: Դեկլարացիաների կիրառումով հստակ պատկերացում կկազմվի գյուղացիական

տնտեսության արտադրական, տնտեսական գործունեության մասին և հիմք կիանդիսանա ապահովագրական սակագնի, ապահովագրավճարի, ապահովագրական գումարի հաշվարկման համար:

- Հստ տարածաշրջանների գործող կոռուպտիվիտիվների գործունեությունը, գյուղատնտեսական կոռուպտիվների պետական աջակցության ուղղությունները և մեխանիզմները: Հիմնավորվել է օրենքի ընդունման պայմաններում յուրաքանչյուր մարզում տվյալ տարածաշրջանի մասնագիտացմանը համապատասխան առնվազն 2-3 կոռուպտիվների ստեղծումը:

Գործունեությանս ընթացքում ակտիվ մասնակցություն եմ ունեցել ագրարային ոլորտի գարզացման ծրագրերին և օրենսդրության կատարելագործման աշխատանքներին, հատկապես «ՀՀ գյուղատնտեսության 2015-2025թթ. կայուն գարզացման ռազմավարություն» ծրագրի նախագծի և «Գյուղատնտեսական կոռուպտիվների մասին» ՀՀ օրենքի մշակմանը: Վերջին երկու տարիների ընթացքում հրատարակել եմ շուրջ 10 գիտական հոդված, դրանք են.

1. Ուկանյան Ա.Ե., Ուկանյան Գ.Վ., ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման խոչընդոտներն ու պետական աջակցության անհրաժեշտությունը// Ազրողական գիտական հոդվածագիր, 2013. - էջ 32-36

2. Ուկանյան Ա.Ե., Կարապետյան Կ.Լ, ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման ուղղակի ազդեցության գնահատումը// Ազրողական գիտական հոդվածագիր, 2013. - էջ 223-228

3. Восканян А.Е., Карапетян К.Л., Пути повышения эффективности программ государственного регулирования аграрной сферы РА// Международный технико-экономический журнал, N6, 2013, Москва.-с. 44-47

4. Ուկանյան Ա.Ե., Ուկանյան Գ.Վ., Գյուղատնտեսական ռիսկերի կառավարումը ինդեքս ապահովագրության միջոցով// Ազրողական գիտական հոդվածագիր, 2014. - էջ 107-110

5. Ուկանյան Ա.Ե., Ուկանյան Գ.Վ., Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում պետական աջակցության ՌԴ փորձի ուսումնասիրումը և կիրառման հեռանկարները ՀՀ-ում// Материалы международной научной

конференции по проблемам продовольственной обеспеченности и биоразнообразия / НАУА; Ред.кол.: Д.П. Петросян и др. -Ереван, Изд-во НАУА, 2014. - с. 217-220


6. Восканян А.Е., Восканян Г.В., Карапетян К.Л., Государственное регулирование и новые подходы политики развития сельского хозяйства республики Армения// Российская экономическая модель-3: институты развития: сб. Материалов Междунар. науч.-практ. конф. (14-18 мая 2014г., г. Анапа).-Краснодар, 2014. – с. 58-63

7. Ուկանյան Ա.Ե., Կարապետյան Գ.Լ., ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության կատարելագործման ուղիները// Материалы международной научной конференции по проблемам продовольственной обеспеченности и биоразнообразия / НАУА; Ред.кол.: Д.П.Петросян и др. – Ереван, Изд-во НАУА, 2014. – с. 109-113

8. A. Voskanyan, I. Panosyan, The necessity and directions of improvement of agricultural support services: Известия, Ереван 2015,

9. Ուկանյան Ա. Ե., Կարապետյան Գ. Լ., ՀՀ գյուղատնտեսության հարկման քաղաքականության կատարելագործումը՝ որպես պետական կարգավորման գործոն, «Ազրողիտություն» գիտական ամսագիր, 9-10(685-686)/2015, Եր. 2015

Տ.պ.թ. դոցենտ՝


Աշոտ Ուկանյան

Հետաքրքրվածության նամակ

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից ձևավորվող հասարակական խորհուրդը կարող է լիարժեք հարթակ հանդիսանալ գյուղի և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության և կատարելազորման շուրջ շահագրգիռ քննարկումների անցկացման համար: Այդ իսկ պատճառով առանձանակի հետաքրքրություն ենք ցուցաբերում ՀՀ ազգարային ոլորտի քաղաքականության հիմնական հարցերի և ուղղությունների շուրջ, մասնավորապես՝

- գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու գյուղացիական տնտեսությունների խոշորացման,
- գյուղացիական տնտեսությունների մոդելների և արդյունավետության բարձրացման,
- ազգարային ներուժի (հողի, ջրի և աշխատանքային ռեսուրսների) օգտագործման քաղաքականության,
- գյուղատնտեսական և առևտրային քաղաքականության,
- գյուղատնտեսության ենթակառուցվածքների արդյունավետության բարձրացման,
- գյուղատնտեսության խորհրդատվական համակարգի զարգացման միասնական ռազմավարության մշակում, ինչպես՝ կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ,
- գյուղատնտեսության գիտահետազոտական համակարգի զարգացման,
- սերմնաբուծության և սերմնարտադրության,
- տոհմաբուծության և անասնաբուծության,
- մեքենայացման և մատակարարումների,
- գյուղատնտեսական մթերքների իրացման և վերամշակման քաղաքականության,
- սննդի անվտանգության հարցերի,
- գործարարության և մրցակցության միջավայրի բարելավման,

- զյուղատնտեսական կոռպերատիվների ձևավորման և զարգացման քաղաքականության,
- զյուղական տարածքներում ՓՄՁ-ների օժանդակման և զարգացման քաղաքականության,
- զյուղական վայրերում ոչ զյուղատնտեսական գրաղվածության հարցերի,
- ազրարային օրենսդրության ամբողջականացման խնդիրների լուծման և հատկապես «Գյուղի և զյուղատնտեսության մասին» օրենքի մշակում և ընդունման,
- Հստ տարածաշրջանային առանձնահատկությունների տարբերակված ազրարային քաղաքականության իրականցման,
- Գյուղատնտեսությունում պետական կարգավորման տնտեսական և վարչական ազդեցության կառուցակարգերի կատարելագործման,
- Գյուղատնտեսական աշակեցության միասնական քաղաքականության իրականացման, սուբսիդավորման նոր ուղղությունների հիմնավորման,
- Ազրարային ոլորտում իրականացվող քազմապիսի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման:

Աշխատանքային գործունեության ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները կներդրվեն հասարակական խորհրդում բովանդակալից քննարկումների կազմակերպմանն և ՀՀ զյուղի և զյուղատնտեսության զարգացման արդյունավետ քաղաքականության մշակման ու իրականացման գործին:

S.գ.թ. դոցենտ՝



Աշոտ Ներսիսյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հայաստանի համար գյուղատնտեսությունը միշտ էլ ունեցել է առանձնակի նշանակություն: Աշխարհաքաղաքական իրավիճակն ու հետազա միտումները, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքների բերումով՝ ազրարային ոլորտի զարգացման հարցերը և արդյունավետ մողելի կիրառումը ձեռք են բերում հատուկ կարևոր նշանակություն: ՀՀ գյուղատնտեսության ազրոպարենային համակարգի և այլ ձյուղերի արտադրական և տնտեսական ցուցանիշների փաստացի աճի տեմպերը չեն ունենում այն ազդեցությունը, որը կապահովի գյուղացիական տնտեսությունների եկամուտների ու կենսամակարդակի բարձրացում, գյուղական տարածաշրջանների զարգացում, աղքատության կրծառում և վերջապես երկրի պարենային անվտանգության հուսալիություն:

Ազրարային ոլորտում վարվող քաղաքականությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմնական բաղկացուցիչ մասերից է, որը պետական կառավարման այլ մարմինների մասնակցությամբ, մշակվում և իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

Ոլորտում իրականացվող քաղաքականությունը նպատակառության է եղել հետևյալ հիմնախնդիրների լուծմանը՝

- գյուղատնտեսական արտադրության ինտեսիվացման համար անհրաժեշտ պայմանների և ենթակառուցվածքների ձևավորմանը ու զարգացմանը,
- գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական մատակարարումների և արտադրական սպասարկումների կազմակերպման գործի բարելավմանը,
- ոռոգման բնագավառում տնտեսական բարեփոխումների իրականացմանը,
- գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառներում առկա լարվածության մեղմացմանը,

- գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության բնագավառներում վարկավորման ծավալների ընդլայնմանը,

- տեղական արտադրողների շահերի պաշտպանությանը:

Հարկավոր է ընդգծել, որ վարվող ազրարային քաղաքականությունը, պետական կարգավորման տնտեսական և վարչական ազդեցության մեթոդներն ու միջոցները, պետական աջակցության կիրառվող ուղղությունները բեկումնային չեն: Դրա վկայություններն են գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման ներկա վիճակը (չի օգտագործվում վարելահողերի 37%), հողի շուկայի չափազանց դանդաղ կայացումը, գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման կազմակերպման դժվարությունները, համագործակցության առաջավոր ձևերի, մասնավորապես կոռպերատիվների ձևավորման դանդաղ ընթացքը, գյուղում այլընտրանքային զբաղվածության ապահովումը և սոցիալական վիճակը:

ՀՀ սոցիալական և տնտեսական իրավիճակը, Մաքսային Միությանն անդամակցելու պարագայում ուրվագծվող մարտահրավերները, ուղղակիորեն դրդում են ազրարային ոլորտում գնալ բարեփոխումների՝ ընտրելու զարգացման գործուն մոդելներ, ուր կնշմարվեն գյուղատնտեսության կազմակերպական և կառավարման համակարգի յուրաքանչյուր օղակի դերը, տեղն ու պարտականությունները, պետական կարգավորման ու աջակցության նոր մոտեցումները:

Վերլուծելով և այդ տեսանկյունից գնահատելով կիրառվող ազրարային քաղաքականության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և խոչընդոտները, առավել իրատեսական է դառնում Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հեռանկարը: Հանրապետության տնտեսության համընդհանուր անկման և ռեսուրսների սակավության պայմաններում գյուղատնտեսության ձյուղը, և գյուղն ընդհանրապես, դրսնորել են հարաբերական կայունություն և աճ:

Վերջին տարիներին, Հայաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման քաղաքականության կենսագործմամբ, կատարվեցին համակարգային վերափոխումներ և պայմաններ ստեղծվեցին շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսության ամրապնդման համար: Տնտեսական հարաբերությունները կարգավորող մեխանիզմների, վարկային ծրագրերի մշակման ու կիրառման, ներդրումների ներգրավման, պետական կարգավորման ու աջակցության

ծավալների ընդլայնման հիման վրա զյուղում առաջընթացը նշմարելի է դարձել: Իրականացված քաղաքականության ամենակարևոր ձեռքբերումը կամ դրականը նկատվում է զյուղական վայրերի բնակչության մտածելակերպի փոփոխության մեջ. ուր առավելապես զգացնել են տալիս նախաձեռնողական ունակությունները:

Ամփոփելով զյուղատնտեսությունում իրականացված քաղաքականության հանրագումարային արդյունքները, կարելի է հակիրճ ներկայացնել այն իրավիճակը, որը ներկայում գոյություն ունի ինչպես ճյուղում, այնպես էլ զյուղում.

- Զնավորված զյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, եկամտի այլընտրանքային աղբյուրների բացակայությունը, ներքին շուկայի սահմանափակությունը, զյուղական ենթակառուցվածքների անգործությունը, ծառայությունների ցանցի զարգացման ցածր մակարդակը և այլն հիմնականում հանգեցնում են ներտնտեսային կարիքների բավարարմանն ուղղված, փոքր ու ոչ ապրանքային տնտեսությունների առկայությանը,

- Հանրապետության զյուղատնտեսության համախառն արտադրանքի 90%-ից ավելին ապահովող զյուղացիական տնտեսությունները բնութագրվում են իրենց փոքր չափերով (1 տնտեսությանը միջինը ընկնում է 1.37 հա զյուղատնտեսական հողատեսքեր), բազմաճյուղությամբ (միջին տնտեսությունը գրաղվում է որոշակի՝ 6-8 անուն զյուղատնտեսական մթերքների արտադրությամբ) և ցածր ապրանքայնությամբ (ապրանքայնության միջին մակարդակը կազմում է 50%):

- Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ վերջին տարիներին արձանագրվել են նկատելի կառուցվածքային փոփոխություններ: Եթե 1990թ. համախառն արտադրանքի անասնապահության և բուսաբուծության բաժինները, համապատասխանաբար, կազմում էին 58 և 42%, ապա 2015թ. 41 և 59%: Նշվածը հիմնականում պայմանավորված է կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կրծատումներով և անասնակերերի ներկրման դժվարություններով:

Մտահոգիչ է ՀՀ զյուղատնտեսությունում ստեղծված իրավիճակը, վարվող ազրարային քաղաքականության արդյունքային ցուցանիշների ցածր մակարդակը, ուսուրային ներուժի՝ հատկապես զյուղատնտեսական նշանակության հողերի ոչ արդյունավետ օգտագործումը կամ ընդհանրապես շրջանառությունից դուրս թռողնվելը, պատճառահետևանքային երևույթները և զյուղմթերքների ներկրումների

տեսականու ու ծավալների ավելացման միտումները: Համատեղ քննարկումներում կարևորվել է զյուղատնտեսության կայուն զարգացումը ապահովող այնպիսի հիմնախնդիրների ու կանոնակարգումների անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝

➤ Բարձր վերարտադրության սերմերի և տնկանյութի արտադրության կազմակերպման արդյունքում զյուղացիական և ֆերմերային տնտեսությունների անհրաժեշտ պահանջարկի բավարարումը:

Առաջարկվում է քննազավառում զիտահետազոտական աշխատանքների ակտիվացման հետ մեկտեղ խթանել սերմնարուծության զարգացումը կայացած, իրենց դրսնորած և արտադրական փորձ ունեցող ֆերմերային տնտեսություններում կամ միավորումներում (մասնակցային սկզբունքով): Առանձնակի կարևորել սերմերի որակի նկատմամբ պատասխանատվության բարձրացման մեխանիզմների ներդրումը: Օժանդակել պարենային կարտոֆիլի և տնկանյութի արտահանմանը, կիրառել զյուղատնտեսական ապրանքների մաքսային ձևակերպման առավել պարզեցված ձևեր:

➤ՀՀ պետքուջեռում զյուղատնտեսության սուբսիդավորման համար գումարների նախատեսում և մեխանիզմների կատարելագործում:

Առաջարկվում է սուբսիդավորման գումարներն ուղղել սերմացուի և կաթի արտադրությանը ու մայրական կազմը թարմացնելուն ուղղված մատղաշների պահպանելուն: Լայնորեն կիրառել զյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր, հատկապես զյուղական վայրերում երիտասարդների նախաձեռնությամբ կազմակերպվող տնտեսությունների կայացման և զյուղատնտեսական գործունեության ծավալման համար:

➤Գյուղատնտեսական թարմ և վերամշակված արտադրանքի իրացման գործընթացը:

Առաջարկվում է կայացած ֆերմերների մասնակցությամբ ձևավորել մեծածախ շուկաների համակարգ, պետական աջակցությամբ ստեղծել «Գյուղմթերքների արտահանմամբ և ներդրանքի ներկրմամբ զբաղվող» կառույց և «Ազատ առևտրի գոտի» լոգիստիկ կենտրոն: Ազրարային շուկայի մասին և բիզնես տեղեկատվության բացը լրացնելու նպատակով շեշտադրում է արվում օգտագործել հաղորդակցման վիրտուալ ցանցի հնարավորությունները:

- Համագործակցության արդյունավետ ձևերի ներդրումը:

Առաջարկվում է գյուղատնտեսական կոռպերացիայի զարգացումը դիտարկել, որպես ազգարային քաղաքականության առանցքային ուղղություն, այսինքն կոռպերատիվների ստեղծման կազմակերպական միջոցառումներին և զարգացման խնդիրներին տալ համակարգված ծրագրային բնույթ, ինչպես նախատեսված է «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքով:

➤ Բնական աղետների իրազեկում, կանխարգելման միջոցառումների իրականացում, հակակարկտային սարքավորումների ցանցի ընդլայնում ու նպատակային օգտագործում:

Առաջարկվում է առաջիկա 5 տարիներին հակակարկտային կայանների մասայական տեղադրման աշխատանքներ իրականացնել և 2016թ.-ից սկսած միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ ներդնել գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգ (կենդանիների, բերքի, գույքի):

- Տնհմային աշխատանքները և արհեստական սերմնավորումը:

Առաջարկվում է անասնաբուծական մթերքների ավելացման, գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կայունության ապահովումը իրականացնել հանրապետությունում առկա, փորձ կուտակած խոշոր և միջին տնտեսությունների բազայի վրա տոհմային հատկանիշներով ու կարգավիճակով տնտեսությունների ձևավորման միջոցով: Խթանել կայուն և մշտապես գործող արհեստական սերմնավորմամբ զբաղվող սուբյեկտներին և կատարելագործել ծառայությունների մատուցման մեխանիզմները:

➤ Գյուղատնտեսական մթերքների ներկրումները տեղական արտադրությամբ փոխարինումը:

Առաջարկվում է մշակել և իրականացնել ծրագիր, օժանդակելու գյուղացիական տնտեսությունների գործունեությունը, որոնք նախաձեռնում ու կազմակերպում են տեղական արտադրություն, այն ապրանքների գծով որի պահքանչարկը հիմնականում ապահովվում են ներկրումների հաշվին:

➤ Գիտական և խորհրդատվական գործունեությունը, արդյունքների ներդրումը և ծառայությունների մատուցման կատարելագործումը:

Առաջարկում է այս ոլորտում գնալ օպտիմալացման, կատարել կառուցվածքային փոփոխություններ, հատկապես ուշադրություն բևեռել համակարգի կառավարման (մենեջմենտի) բարելավմանը, ձեռնամուխ լինել ցուցադրական տնտեսությունների ձևավորմանը, ազրարային համալսարանի բակալավրիատուրայի և մագիստրատուրայի շրջանավարտներով ազրոպարենային համակարգի կադրային թարմացմանը:

Ըստունվելիք «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025թ. կայուն զարգացման ռազմավարությունում» հստակեցնել և պարզեցնել յուրաքանչյուր հողված տալով բացվածքը և իրականացման ընդհանրական ու տարբերակված ծրագրային մոտեցումներն ու ձևերը:

Գտնում ենք, որ հանրապետության տարածքային և ազրարային զարգացման քաղաքականությունը արմատական կառուցվածքային վերափոխումների պետք է ենթարկվի, ժամանակն է, որպիսզի պետական կառավարման կենտրոնական, տարածքային և ինքնակառավարման մարմինների գործառությունները լինեն հստակ, լիազորության սահմաններում և ուղղորդված պարենային ինքնապահովմանը, գյուղական բնակավայրերում գործունեության բազմազանեցմանն ու գյուղացիական տնտեսությունների և նրանց միավորումների եկամուտների բարձրացմանը: ՀՀ-ում առկա են ազրարային ոլորտի զարգացման զգալի հնարավորություններ ու ուսուրանություններ, և պատրաստակամություն եմ հայտնում իմ գործուն մասնակցությունն ունենալ հայրենական գյուղատնտեսության զարգացման նախաձեռնություններին, ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Բնականաբար նշված առաջարկությունները լրացուցիչ քննարկման, ուսումնասիրման և ծրագրային ձևակերպման կարիք ունեն, որին կծառայի ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից ձևավորվող հասարակական խորհուրդը:

S.գ.թ. դոցենտ՝  Ա. Արմեն Սարգսյան